# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 4

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Եղեգնավան համայնքի 2021 թ.-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

3. Եղեգնավանի համայնքապետարանի 1989-2016 թթ. արխիվային փաստաթղթերը կարգավորելու և պետական արխիվ հանձնելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

4. Համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
/Զեկուցող՝ Հ. Ղազարյան/

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 5-Ա

### ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Հաստատել Եղեգնավան համայնքի տարեկան աշխատանքային պլանը /կցվում է 11 էջ/:

Կողմ -4

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## Համայնքի 2021 թվականի

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Հովսեփ Ղազարյանը

Հաստատվել է՝ համայնք ի ավագանու 12.02.2021 թ. թիվ 5-Ա որոշմամբ

ԵՂԵԳՆԱՎԱՆ
2021թ.

1. Համայնքի 2021 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 1.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

| Հ/հ | Ծրագրի անվանումը | Ծրագրի արժեքը (հազ. դրամ) |
|---|---|---|
| Ոլորտ 1. Ընդհանուր | | |
| 1. | Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում | 20792.8 |
| Ընդամենը | | 20792.8 |
| Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն | | |
| 1. | Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում | 33000.0 |
| 2. | Համայնքի տարածքում արևային վերականգնվող համակարգի տեղադրման աշխատանքներ | 9000.0 |
| 3. | Եղեգնավան համայնքում ցերեկային լուսավորության իրականացում | 42000,0 |
| Ոլորտ 3. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | | |
| 1. | Համայնքի մարզադաշտի կանաչապատում | 25,0 |
| 2. | Մարզադաշտի դարպասների համար ցանցի ձեռքբերում | 200.0 |
| Ընդամենը | | **225,0** |
| Ոլորտ 4.Կրթություն | | |
| 1. | Համայնքի նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում | 10000.0 |
| Ընդամենը | | **10000.0** |
| Ոլորտ 5.Սոցիալական պաշտպանություն | | |
| 1. | Աջակցություն համայնքի սոցիալապես  անապահով բնակիչներին | 1500,0 |
| Ընդամենը | | **1500,0** |
| Ոլորտ 6. Շրջակա միջավայրի պահպանություն | | |
| 1. | Եղեգնավան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում | 1600.0 |
| Ընդամենը | | **1600.0** |
| Ոլորտ 7. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ | | |
| 1. | Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում | 1150,0 |
| Ընդամենը | | **1150,0** |
| Ոլորտ 8. Բնական գազ և նավթամթերք | | |
| **1.** | Նոր կառուցված հազային համակարգի միացում | 500,0 |
| Ընդամենը | | **500.0** |
| Ընդհանուրը | | **77767.8** |

Աղյուսակ 2.ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

| Ամփոփ նկարագիր | Արդյունքային ցուցանիշներ | Տեղեկատվության աղբյուրներ | Պատասխանատու | Ժամկետ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|---|
| **Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ.** Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունները: | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.** 1.Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակը (հարցումների հիման վրա) – 7 /բավականին լավ/: | **Ծրագրի գնահատման համակարգ.** ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարությու ն |
| **Միջանկյալ արդյունք 1** Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)** 1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը՝ 5<br>2. Համայնքի ենթակայության կազմակերպությունների թիվը, 2<br>3. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, 4%<br>4. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը, այո<br>5. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 5 %-ով<br>6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը՝ 100% | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, աշխատակազմ | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Համապատասխա ն մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն |

<table>
<tr><td></td><td>7. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 5 օր</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2">Միջոցառումներ<br><br>1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում<br>2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկման վճարների կատարում</td><td colspan="4">Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)<br><br>1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 20792.8 հազ. դրամ<br>2. Համայնքի աշխատակազմի աշխատողներ՝ 5<br>3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1<br>4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք<br>5. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը՝ 16<br>6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք՝ www.exegnavan.am<br>7. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր՝ 2</td></tr>
<tr><td colspan="6">Ծրագիր 2. Եղեգնավան համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում</td></tr>
<tr><td>Ծրագրի նպատակ<br><br>Ապահովել ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցումը</td><td>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ<br><br>✓ Ներհամայնքային ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը՝ բավարար<br>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունից, 60%<br>✓ Տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերի (վառելիքի և ամորտիզացիոն ծախսերի) խնայողությունը, 10%</td><td>Ծրագրի գնահատման համակարգ,<br><br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</td><td>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, գլխավոր մասնագետ</td><td>2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր</td><td>Աշխատանքները իրականացվելու են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Միջանկյալ արդյունք 1**<br><br>Ասֆալտապատվել են ներհամայնքային ճանապարհները | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ Բարեկարգ ներհամայնքային ասֆալտապատված ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 90 % | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ | | | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջոցառումներ**<br>✓ Եղեգնավան համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման արժեքը կազմում է 33000.0 հազար դրամ | | | |
| **Ծրագիր 3. Համայնքի տարածքում արևային վերականգնվող համակարգի տեղադրման աշխատանքներ և համայնքում ցերեկային լուսավորության իրականացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br><br>Ապահովել ցերեկային լուսավորության համակարգի սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցումը | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>✓ Ցերեկային լուսավորության համակարգի սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների մատուցման որակը՝ բավարար<br>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ցերեկային լուսավորության սպասարկման, տեղադրման, շահագործման և պահպանման ծառայությունից, 60%<br>✓ Էլ. խնայողություն խնայողությունը, 10% | Ծրագրի գնահատման համակարգ,<br><br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, գլխավոր մասնագետ | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Աշխատանքները իրականացվելու են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան |
| **Միջոցառումներ**<br>✓ Համայնքի տարածքում արևային վերականգնող համակարգի տեղադրման աշխատանքներ և համայնքի ցերեկային լուսավորության աշխատանքների իրականացում | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Համայնքի տարածքում արևային վերականգնող համակարգի տեղադրման աշխատանքների և համայնքի ցերեկային լուսավորության աշխատանքների իրականացման արժեքը կազմում է 9000.0 հազար դրամ | | | |

| **Ծրագիր 4. Եղեգնավան համայնքի մարզադաշտի հարակից տարածքի կանաչապատում և դարպասների ցանցի ձեռքբերում** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ծրագրի նպատակ**<br>Համայնքում ունենալ բարեկարգ մարզադաշտ | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**<br>✓ Համայնքի բնակիչների կարծիքը մարզադաշտի բարեկարգման աշխատանքների վերաբերյալ, լավ | Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմ | 2021թ. Ապրիլ-հունիս | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Մեծացել է բնակավայրի գրավչությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ Մարզադաշտի վիճակը՝ բավարար<br>✓ Բարեկարգման տևողությունը՝ 5 օր | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ | | | |
| **Միջոցառումներ**<br>1. Եղեգնավան համայնքի մարզադաշտի բարեկարգման աշխատանքների իրականացում | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Բարեկարգման աշխատանքներն իրականացնող աշխատակիցների թիվը՝ 4 | | | |

| **Ծրագիր 4 Եղեգնավան համայնքի նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ծրագրի նպատակ**<br>Համայնքում ապահովել նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**<br>✓ Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին՝ 90 % | Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, ՆՈՒՀ-ի տնօրեն | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Եղեգնավան համայնքում ապահովվել է նախադպրոցական ուսումնական հաստատության բնականոն գործունեությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ ՆՈՒՀ հաճախող երեխաների ընդհանուր թիվը՝ 50<br>✓ Մանկապարտեզի խմբերի թիվը՝ 2<br>✓ ՆՈՒՀ-ում աշխատող աշխատակիցների թիվը՝ 11<br>✓ Մանկապարտեզում օրվա ընթացքում սննդի տրամադրման թիվը՝ 3 | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ | | | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ✓ Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ լավ<br>✓ Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը շաբաթվա ընթացքում՝ 5 օր | | | | |
| **Միջոցառումներ**<br>✓ Համայնքում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 10000.0 հազար դրամ<br>✓ Մանկապարտեզի գույքի միավորների թիվը՝ 193<br>✓ Մանկապարտեզի սանիտարահիգիենիկ պայմանների համապատասխանությունը նորմատիվ պահանջներին, այո | | | |
| **Ծրագիր 5. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Բարձրացնել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**<br>✓ Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության մակարդակի բարձրացում, այո | Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄՓ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,<br>աշխատակազմ | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Բարձրացել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը՝ 59<br>✓ Սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմումներ ներկայացնողների թիվը, 59<br>✓ Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող | Աշխատակազմ, ՄՓ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ | | | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ծրագրից, 50%<br>✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի | | | | |
| **Միջոցառումներ**<br>✓ Սոցիալական աջակցություն հաշմանդամներին<br>✓ Սոցիալական աջակցություն սոցիալապես խոցելի ընտանիքներին | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր, 1500.0 հազար դրամ<br>✓ Սոցիալական ծրագրի առկայությունը, այո | | | |
| **Ծրագիր 6. Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ**<br>Մաքուր համայնք, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն, այո | Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,<br>1-ին կարգի մասնագետ | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Մաքուր համայնք, սանիտարահիգիենիկ բավարար պայմանների առկայություն | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 1<br>✓ Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը (շաբաթվա կտրվածքով), 1 օր<br>✓ Ծրագրի իրականացման ժամկետը, 1 տարի<br>✓ Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսը, 200 քմ<br>✓ Խնամված կանաչ տարածքների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, 20 %<br>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը | Աշխատակազմ, բնակիչներ | | | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունից, 80 % | | | | |
| **Միջոցառումներ (գործողություններ)**<br>✓ Համայնքում կանոնավոր աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպում | | **Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)**<br>✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 1400.0 հազ. դրամ<br>✓ Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը՝ 1<br>✓ Աղբահանության համար գանձվող վճարի չափը, յուրաքանչյուր բնակչի համար ամսական 120 ՀՀ դրամ | | | |
| **Ծրագիր 7. Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում** | | | | | |
| **Ծրագրի նպատակ**<br>Ակտիվացնել համայնքի մարզական և մշակութային կյանքը | **Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշներ**<br>✓ Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, 40%<br>✓ Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 70% | Ծրագրի գնահատման համակարգ,<br>ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ | Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,<br>Մշակույթի տան տնօրեն, գեղմասվար | 2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր | Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն |
| **Միջանկյալ արդյունք 1**<br>Ակտիվացել է համայնքի մարզական և մշակութային կյանքը | **Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)**<br>✓ Տարվա ընթացքում կազմակերպված մշակութային միջոցառումների թիվը՝ 5<br>✓ Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և խաղահրապարակներով, 40%<br>✓ Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված՝ իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը, 1 | Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ | | | |

| Միջոցառումներ (գործողություններ) | Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) |
|---|---|
| ✓ Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացում<br>✓ Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված՝ ծրագրերի և միջոցառումների կազմակերպում | ✓ Համայնքի բյուջեի միջոցներ, 1450,0 հազար դրամ<br>✓ Մարզադաշտերի թիվը՝ 1 |

ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Հ. ՂԱՋԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 6

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԱԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ շարժական գույքը՝

- ԳԱԶ - 31105-120 մակնիշի, 2005 թվականի արտադրության ավտոմեքենան,
- ՍԿ-5 մակնիշի,1988 թվականի արտադրության կոմբայն,
- <<ԲԵԼԱՌՈՒՍ>> էքսկավատոր, 1978 թվականի արտադրության:

2. Գույքի օտարման մեկնարկային գինը սահմանել համաձայն աուդիտորական կազմակերպության կողմից տրված գնահատականի:

3. Գույքը օտարել մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԶԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 7

## ԵՂԵԳՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 1989-2016ԹԹ. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եղեգնավանի համայնքապետարանի աշխատակազմի արխիվում հաշվառված են համայնքի ղեկավարի որոշումներն ու կարգադրությունները, ավագանու որոշումները, աշխատակազմի քարտուղարի հրամանները, վերադաս մարմիններից ստացված գրությունները և դրանց պատասխանները, քաղաքացիներից ստացված դիմումները, ֆինանսական փաստաթղթերը, աշխատողների անձնական գործերը և համայնքի ղեկավարի գործունեության ընթացքում ստեղծված բոլոր իրավական փաստաթղթերը: «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի արխիվում արխիվային փաստաթղթերի պահպանման ժամկետը 5 /հինգ/ տարի է, որից հետո դրանք հանձնվում են պետական արխիվին մշտական պահպանության համար:

Ղեկավարվելով «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀայաստանիՀանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Տալ համաձայնություն Եղեգնավան համայնքի սեփականություն հանդիսացող 1989-2016թթ արխիվային փաստաթղթերը արխիվացումից հետո հանձնել պետությանը՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 8

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քանի որ Եղեգնավան համայնքի բնակիչ Յուրիկ Զախարյանը դիմել է համայնքապետարան, իրեն վարձակալության իրավունքով պատկանող հողատարածքը գնելու համար, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, Եղեգնավանի համայնքապետարանի և Յուրիկ Զաքարյանի միջև 16.11.2018 թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 2.3.3 կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

1. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, թույլատրել ուղղակի վաճառքով Յուրիկ Զաքարյանին օտարել համայնքի սեփականություն հանդիսացող 03-041-0184-0062 ծածկագրի տակ գտնվող 1,00194 հա. գյուղատնտեսական նշանակության հողատեսքը:

2. Գույքը օտարել մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**